ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԲ ՄԱՅՐԱՄՈՒՏԻՆ ԱՐԵՎՆ ԸՆԿՂՄՎՈՒՄ Է ԾՈՎԻ ՄԵՋ

(Վիպակ)

ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

(ԱՐԽԱՆԳԵԼՈ)

ԵՐԲ ՄԱՅՐԱՄՈՒՏԻՆ ԱՐԵՎՆ ԸՆԿՂՄՎՈՒՄ Է ԾՈՎԻ ՄԵՋ

(Վիպակ)

ԵՐԵՎԱՆ 2013

ԱՐԽԱՆԳԵԼՈ

http://arxangelo.info

Սույն էլեկտրոնային հրատարակությունը ներկայացնում է Արամ Հակոբյանի հեղինակային վիպակը, որը անվճար տեղադրված է հեղինակի բլոգ-կայքում։

Բոլոր իրավունքները պատկանում են հեղինակին և պաշտպանված են։ Գրքի ոչ մի տող չի թույլատրվում պատճենել կամ օգտագործել առանց հեղինակի թույլատվության։

© 2012 Արամ Հակոբյան (Արխանգելո)

***

Արագությունը անչափ մեծ էր, իսկ թունելը, որով սլանում էր նա՝ անվերջանալի երկար։ Չնայած նրան, որ հեռվից նշմարվում էր պայծառ լույսը, այնուամենայնիվ, թվում էր՝ այդ լույսին հասնելու համար դեռ երկար ճանապարհ էր պետք անցնել։

Թռիչքը թեթև էր, սահուն և արագ։

Հանկարծ հեռվի այն պայծառ լույսը, դեռ թունելի կեսին չհասած, անսպասելիորեն պարուրեց նրան։

Լույսի պայծառությունից մի պահ աչքերը կուրացան։ Որոշ ժամանակ անց, մի կերպ կկոցելով, բացեց աչքերը։ Նա քար կտրեց տեղում։ Ապշահար շուրջ բոլորն էր նայում։ Ամեն ինչ լուսավոր էր, ամեն ինչ լույսից էր և չկար ոչինչ՝ բացի լույսից։

- Այս որտե՞ղ եմ ես, - շշնջաց և դեռ չավարտած խոսքը՝ ետևից լսվեց մի երգեցիկ ձայն, – Սա քավարանն է՝ դժողք կամ դրախտ տանող ճանապարհի բաժանարարը։

Շրջվելով նկատեց, որ իր դիմաց կանգնած է մի լուսե էակ, որի լուսեղենության պատճառով չէին նշմարվում դիմագծերը։ Եվ այդ լուսե էակից զարմանալի կերպով կարծես խաղաղություն ու հանգստություն էր ժայթքում։

- Դու հրեշտա՞կ ես, - հարցրեց նա։

- Գաբրիելն եմ ես, հրեշտակապետն Աստծո, - պատասխանեց լուսեղենը։

Եվ այդ պահին կինոթատրոնների նման նրա առջև հառնեց մի էկրան, որի վրա շատ արագ, բայց մանրակրկիտ ցուցադրվում էր նրա ամբողջ կյանքը։

Նա հիշեց ավտոմեքենան, որը վթարի ենթարկվեց. այժմ ամեն ինչ հասկանալի էր։ Արդեն գիտակցում էր՝ ինչ է պատահել, որտեղ է և ինչու։

Հրեշտակապետը գրքանման ինչ որ առարկա վերցրեց, բացեց և, առանց հայացքը կտրելու առարկայից, հարցրեց.

- Ես ուզում եմ իմանալ. ըստ քեզ ի՞նչ ես բաց թողել կյանքում, ի՞նչ ես ցանկացել տեսնել, բայց չես հասցրել։

- Ծով չեմ տեսել, - առանց երկար մտածելու պատասխանեց նա։

- Ծո՞վ, - զարմացավ հրեշտակապետը։

- Այո, ես ծով չեմ տեսել, չեմ զգացել նրա խոնավությունը, չեմ զգացել նրա շունչը, չեմ տեսել՝ ինչպես է արևը ընկղմվում ծովի մեջ, երբ գալիս է մայրամուտը։ Իսկ ես այնպես էի երազում, որ մի օր կիմանամ թէ ինչ է ծովը՝ ազատ, անեզր ծովը։

- Ուրի՞շ։

- Աշխարհը չեմ տեսել։ Երբեք այլ երկրներում չեմ եղել։ Կուզեի աշխարհը տեսնել՝ շատ չէ, գոնե մեկ-երկու երկիր։

- Հասկանալի է, - կարծես ինչ-որ բան գլխի ընկնելով ասաց Գաբրիելը։ Նա շարունակում էր ուշադիր զննել ձեռքի տարօրինակ առարկան, կարծես ինչ-որ բան էր ընթերցում այնտեղից.

- Ասա՛ ինձ, խնդրեմ, տղա՛, ո՞ւմ չես ներել քո երկրային կյանքում, ի՞նչն է, որ այդքան ցավ է պատճառել քեզ, ի՞նչն է սիրտդ այդպես խամրեցրել։

- Ինձ չեմ ներել, - գլուխը կախեց տղան։

- Քե՞զ, ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, - հարցրեց Գաբրիելը։

- Նրան եմ սիրել։

- Հրաշալի է։

- Ոչ մի հրաշք, - պատասխանեց տղան։

- Զարմանալի և տարօրինակ բաներ ես խոսում, տղա՛։ Հապա շարունակիր, միգուցե կարողանամ քեզ հասկանալ։

- Զարմանալի ոչինչ չկա։ Սիրել եմ նրան անհուն սիրով։ Իսկ իր համար ես ոչ այլ ինչ եմ եղել, քան սովորական տղա, իրեն ամենօր փողոցներում հանդիպող անցորդ։

- Չես ներել քեզ, որ սիրել ես նրա՞ն։ Բայց ինչո՞ւ, չէ որ սերն այնքա՛ն գեղեցիկ զգացմունք է, չէ՞ որ դա մեր Տիրոջ պարգևն է մարդ արարածին, - Գաբրիելը կարծես շփոթված լիներ։

- Սերը գեղեցիկ է, այո, գեղեցիկ է այնքան ժամանակ, մինչ այն քեզ չի ոչնչացրել։

- Ինչպե՞ս կարող է Աստծո պարգևը չարիք պատճառել մարդուն, էլ չեմ խոսում ոչնչացման մասին, - Գաբրիելը իրոք տարակուսանքի մեջ էր։

- Դու չնայած հրեշտակապետ ես, սակայն, ինչպես տեսնում եմ, քեզ խորթ է սեր զգացմունքը։

- Օ,՛ոչ սիրելիս, դու սխալվում ես, մեր՝ հրեշտակների էությունն է սերը։ Սակայն ինչ-որ առումով ճիշտ ես, սեր հակառակ սեռի հանդեպ մեզ տրված չէ հասկանալ, մենք ձեզ պես երկսեռ չենք։ Սիրո այդ տեսակը Աստված, որպես պարգև, միայն մարդուն է տվել։ Սակայն դուք՝ մարդիկ, դա սկսել եք անտեսել, այդ պարգևը ձանձրացրել է ձեզ, դուք սկսել եք խեղաթյուրել այն, ձևափոխել։ Դուք սկսել եք այդ ամենի մեջ նույնիսկ նյութական շահ փնտրել։ Դուք սկսել եք խեղաթյուրել Աստվածայինը, հասկանո՞ւմ եք, հասկանո՞ւմ եք, թե ինչ մեծ պարգև է դա, - բարկացած տոնով բղավեց Գաբրիելը։

- Այո, ցավոք սրտի դու ճիշտ ես, Գաբրիել, մենք՝ մարդ արարածներս՝ համենայն դեպս մարդկանց մեծ մասը, իր կյանքի ընթացքում չի գնահատում այդ Աստվածայինը, նամանավանդ այն դեպքում, երբ այն մատուցվում է մեզ սկուտեղի վրա։ Մեզ թվում է՝ հենց այդպես էլ պետք է լիներ, ու սերը սովորական կյանքի ընթացք է։ Շատերն էլ այն խաղ են համարում, սկսում են խաղալ այնքան ժամանակ, մինչև խաղալիքի փչանալը։ Սակայն

շատ մարդիկ էլ երազում են այդ մասին։ Նրանք գիտակցում են այդ պարգևի էությունն ու մեծությունը, սակայն չկարողանալով հասնել իրենց Աստվածային պարգևին՝ սկսում են հիասթափվել նրանից։

- Ինչպես դո՞ւ, - հարցրեց Գաբրիելը։

- Ինչպես ես, - նորից գլուխը կախեց տղան, - հասկանո՞ւմ ես նա դարձել էր ինձ համար ամենակարևորը իմ կյանքում։ Սիրտս հանեցի ու նվիրեցի նրան, ինքնասիրությունս ու տարիներս փշրեցի նրա ոտքերի տակ, սակայն այդպես էլ չկարողացա սեր արթնացնել նրա մեջ։

- Դո՞ւ չկարողացար, թե՞ նա չուզեց քեզ սիրել, - մի փոքր հեգնող ժպիտով հարցրեց լուսեղենը։

- Չգիտեմ, - աչքերը չկտրելով գետնից պատասխանեց տղան, - դա այժմ էական չէ։ Իսկ դու գիտե՞ս ինչ է սիրո ցավը, - շարունակեց տղան։

- Ոչ, ու մի փոքր էլ ինձ համար տարօինակ է, ինչպե՞ս կարող է լինել սիրո ցավ, ախր սերն ամոքող է, այն պատառիկն է մեր Տիրոջ սրտի, - ուսուցանող տոնով շեշտեց Գաբրիելը։

- Այո, ամոքող, ամոքող քանի դեռ այն չի հայտնվել մարդու ձեռքերում և չի կտրվել իր Աստվածային էությունից, - քթի տակ մրթմրթաց տղան։

- Լավ, շարունակիր, ի՞նչ է այդ ցավը՝ սիրո ցավը, - հետաքրքրված հայացքով զննելով տղային՝ հարցրեց հրեշտակապետը։

- Չեմ հիշում թե ով, եթե չեմ սխալվում Հենրիխ Հեյնեն է ասել. "Սերը դա ատամնացավ է սրտում"։ Սակայն, ըստ իս, սիրո ցավը շատ ավելի ցավոտ է։

- Սարսափելի է, - վախեցած ու կարծես այդ ցավը զգալով ճչաց Գաբրիելը։

- Այո, սարսափելի է, սարսափելի ցավոտ է, երբ ամեն րոպե, ամեն ժամ նրա մասին ես երազում, նրան ես տենչում, իսկ այդ նույն ժամանակ, այդ նույն պահին, մեկ ուրիշ տեղ նրա շուրթերի մեղրածոր աստվածային մեռոնը վայելում է մեկ ուրիշը՝ այն ուրիշը, որը չի հասկանում և երևի չի էլ կարող երբևիցե հասկանալ այդ պահի գինը, այդ մեռոնի արժեքը։ Ցավալի է, երբ գիտակցում ես, որ տարիներդ անցնում են և տարիների հետ մեծանում ու անհասանելի է դառնում քո և նրա միջև տարածությունը։

Որոշ ժամանակ լռություն տիրեց։ Գաբրիելը քարացած, լուռ նայում էր տղային, իսկ տղան էլ կրկին գլուխը կախ գետնին էր նայում, կարծես ինչ-որ բան էր ցած գցել և անընդհատ փնտրում էր այն։

-Լավ, - սթափվեց Գաբրիելը, - վերջին հարցս. Ենթադրենք քեզ ևս մեկ կյանքի հնարավորություն է տրվում, ի՞նչ կփոխեիր կամ ի՞նչ չէիր անի։

- Չէի սիրի նրան։ Ու ընդհանրապես կաշխատեի ոչ մի աղջկա չսիրել, քանի որ երբ ես սիրում եմ՝ ես բաց եմ։ Ես բացում եմ սիրտս ամբողջությամբ նրա առջև։ Երբ ես սիրում եմ, իմ սիրելին ինձ համար ամենաթանկն է, ու ես փորձում եմ նուրբ լինել նրա հետ, փորձում եմ ամեն կերպ երջանկացնել նրան։ Իսկ աղջիկների մեծ մասը դա ընկալում է որպես թուլություն։ Այդպիսի վարքը նրանց մոտ չգիտես թե ինչու ասոցացվում է թուլամորթության հետ։ Սակայն ես այդպիսին չեմ։

- Գիտեմ, - տխուր տոնով պատասխանեց հրեշտակապետը, - ես քաջ ծանոթ եմ քո կյանքին։

- Տեսնո՞ւմ ես, - դատարանի կողմից արդարացվածի պես, ուրախացավ տղան։

-Պարզ է, պարզ է..., - քթի տակ շշնջալով ու ձեռքի գրքույկի մեջ ինչ-որ գրանցումներ անելով՝ ասաց Գաբրիելը։

-Ի՞նչն է պարզ, - հարցրեց տղան։

- Դու կտեսնես ծովն ու արևամուտին ծովն ընկղմվող արևը, դու կտեսնես բազում հրաշալի երկրներ, դու կներես քեզ և այլևս չես հիշի այն աղջկան, որի պատճառով սիրտդ ցանցի է նմանվել։ Այլևս դու ազատ ես, կյանքը քեզ համար չէ, աշխարհը դատարկվել է սիրուց, դու այնտեղ չես կարող։ Մենք գնում ենք

դրախտ, - ասաց Գաբրիելը և երկուսով անհետացան լույսի խորքերում....

.....

Սենյակում մթություն էր՝ լուռ մթություն։ Սենյակի անկյունում նստած էր աղջիկը՝ առջևում բացված ընկած էր չմաշված ու ընդամենը մեկ-երկու անգամ ընթերցված մի բլոկնոտ, որի մեջ բանաստեղծություններ էին՝ բանաստեղծություններ նվիրված հենց իրեն։ Աղջկա աչքերը թաց էին։

Հեղինակի մասին

Արամ Հելբիկի Հակոբյան: Ծնվել է 1978 թվականի մարտի 12-ին, Երևանում: Բլոգեր:

Համաշխարհում հանդես է գալիս նաև «Արխանգելո» կեղծանվամբ: Բլոգերությամբ զբաղվում է դեռևս 2007թվականից:

Վարում է Արխանգելոյի բլոգը՝ http://arxangelo.info հասցեով:

Չափազանց ստեղծագործելը հեղինակի տարերքներից մեկն է. Բանաստեղծություններ գրում է դեռևս դպրոցական տարիներից: Դրանք, հիմնականում, սիրո և զգացմունքների մասին են:

Իսկ այս ստեղծագործությունը նրա առաջին վիպակն է: